ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ.

Դեռևս 1988-ի փետրվարյան օրերին՝ մանավանդ սումգայիթյան ողբերգությունից հետո, Թատերական հրապարակում ինքնապաշտպանական ջոկատներ կազմակերպելու կոչեր հնչեցին: Ահա այսպես ծնվեց ինքնապաշտպանության գաղափարը: Այդ ժամանակ էլ առաջինը Ստեփանակերտում և ԼՂԻՄ-ի մի շարք բնակավայրերում առաջ եկան առաջին ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատները, որոնք զինված էին որսորդական հրացաններով և ինքնաշեն զենքերով: Ստեփանակերտի ինքնապաշտպանական ջոկատները, իսկ նրանք մի քանիսն էին և գործում էին կիսագաղտնի, գիշերները հսկում էին քաղաքի փողոցներն ու թաղամասերը, քաղաք մտնող մայրուղիները, որպեսզի ազերի զինյալ ավազակային ջոկատներ ներս չթափանցեն: Ադրբեջանի և մարզի տարածքում տեղակայված խորհրդային ներքին գործերի նախարարության զորամիավորումները օղակի մեջ էին առել անզեն ժողովրդին: Նույնիսկ խլվեցին և մարզի տարածքից տարվեցին հակակարկտային հրանոթները: Ահա այսպիսի պայմաններում ստեղծվեց ինքնապաշտպանության ուժերի մարզային շտաբ, որը ձեռնամուխ եղավ միավորելու կամավորական ջոկատները: Ջոկատների մեծամասնությունը գտնվում էր գյուղերում, որոնցում ընդգրկվում էին 14-ից մինչև 60 տարեկան տղամարդիկ: Նրանցից շատերը առաջին անգամ էին զենք վերցնում: Ջոկատներին մտահոգում էր մարզի բնակչության ինքնապաշտպանության հարցը: Եվ դրանում ստանում էին բնակչության բազմակողմանի աջակցությունը: Արցախի հայական բոլոր բնակավայրերում էլ ստեղծվել էին ինքնապաշտպանական ջոկատներ: Դրանք կարգապահ էին, կազմակերպված, մարտական, կայացնում էին ինքնուրույն վճիռներ, կազմում գործողությունների պլաններ և օգնության հասնում այն բնակավայրերին, որտեղ առկա էր վտանգը:

Ինքնապաշտպանական ջոկատներն ամենից առաջ նեղվում էին զենքի և զինամթերքի պակասությունից: Ճիշտ է, զինապահեստները աստիճանաբար լցվում էին տարբեր ճանապարհներով ձեռք բերված զենքերի հաշվին, սակայն դրանք շատ քիչ էին: Երկրամաս մտած յուրաքանչյուր միավոր զենքի մասին պարտադիր պետք է իմանային մարզային շտաբում: Հնատիպ և որսորդական զինատեսակներին ավելանում էին կարաբիններ, ավտոմատներ, նռնակներ, իսկ քիչ ուշ՝ գնդացիր և հրետանի: Տարբեր տեղերում ստեղծվում էին կետեր, որտեղ ինքնուս զինագործները նորոգում էին զենքերը: Հատուկ ուշադրություն էր դարձվում ազատամարտիկների ռազմական ուսուցմանը:

Ինքնապաշտպանական մեծ թվով խմբեր և ջոկատներ կազմակերպվում էին նաև Հայաստանում, որովհետև հանրապետության սահմանների երկարությամբ ապրող թուրք-ազերիների հակահայկական գործողությունները ավելի սուր բնույթ էին ընդունում: Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցած հենց

առաջին հանրահավաքների ժամանակ ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծելու վերաբերյալ հնչած կոչերը լայն արձագանք գտան ամբողջ հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: Ստեղծված առաջին ջոկատներից շատերը մեկնում էին Արցախ: Հայաստանում ինքնապաշտպանական առաջին ջոկատները սկսեցին կազմավորվել 1988-ի գարնանը: Այդ ժամանակ հիմնականը և բնորոշը ինքնաբուխ հայրենասիրությունն էր: Հայրենիքի փրկության հույսը դեռևս կամավորական ինքնապաշտպանական ջոկատներն էին, որոնց թիվը Հայաստանում և Արցախում մոտավոր հաշվարկներով հասնում էր երեք հարյուրի: Հայոց ազգային բանակի (ՀԱԲ) կոմիսար Վարդան Վարդանյանը պատմում է, որ Հայաստանում առաջին մարտական ուժերից ՀԱԲ-ը ձևավորվել է 1989-ի օգոստոսի 4-ին: Այդ օրը ՀԱԲ-ում զինվորագրվեցին 3000 տղամարդ, կանայք և աղջիկներ: ՀԱԲ-ի հիմնական խնդիրն էր ապահովել Հայաստանի սահմանների անձեռնմխելիությունը և ջոկատներ անցկացնել Ղարաբաղ: Մինչև 1990 թ. Բաքվի կոտորածը ՀԱԲ-ը ուներ 5-6 հազար մարդ: Հետո այն մեծանում էր ժամերով: ՀԱԲ-ի հրամանատար Ռազմիկ Վասիլյանը անում էր ամեն հնարավորը՝ զենք ու զինամթերք ձեռք բերելու համար: 1990-ին Մեղրիից մինչև Նոյեմբերյան սահմանի երկայնքով ՀԱԲ-ն ուներ տասնյակ ջոկատներ, նրանցում ցուցակագրվել էր 18-70 տարեկան 160 հազար մարդ[1]: Հայ կամավորական ջոկատները դարձան ապագա Հայկական բանակի հիմքը[2]:

Հետագա ամբողջ ընթացքը ցույց տվեց, որ կամավորական ջոկատները Արցախում և Հայաստանում «փայլուն կերպով կատարեցին իրենց առջև իրենց իսկ կողմից դրված խնդիրները»[3]: Կամավորական ջոկատները ռազմականացված հիմնարկներից, բուհերի և այլ ուսումնական հաստատությունների ռազմագիտության դասարաններից, հնարավոր նաև այլ տեղերից զենք հայթայթելով, կամավորաբար, հայրենասիրական ու բարոյական մղումներով, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ հայրենի հողը պաշտպանելու համար: Հայաստանում կազմակերպված կամավորական ջոկատները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, հաճախ էլ ոտքով, լեռնային ճանապարհներով ու արահետներով, զենքն ու զինամթերքը շալակած, հայտնվում էին Արցախի կամ Հայաստանի ամենաթեժ կետերում: Նրանք դիմակայում էին թշնամուն և հաճախ էլ արժանի հակահարված հասցնում՝ չխնայելով իրենց կյանքը: 1989 թ. դեկտեմբերի 8-ին Կոռնիձորի կռիվներում զոհվեց Ուջանի «Վահագնածին» երկրապահ ջոկատի մարտիկ Նորայր Հարությունյանը, որն այդ պայքարում զոհված առաջին երկրապահն էր[4]:

1989-1990 թվականներին, երբ ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց ավելի լայն շրջան, Արցախում ինքնապաշտպանական զինված պայքարը նոր երանգ ստացավ, որը հիմնարար և վճռորոշ դեր խաղաց հայոց պետականության վերականգնման և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության գործում: Այդ

---

[1] Ծանր վարագույր, պատմում է ՀԱԲ-ի կոմիսար Վարդան Վարդանյանը, Ե., 1992, էջ 5-17:

[2] Հայաստանի Հանրապետություն, 29.01.2002:

[3] Նույն տեղում:

[4] Երկրապահ, 15.01.2002:

ժամանակ Հայաստանում և Արցախում բախումներն արդեն դարձել էին անընդհատ: Թուրք-ազերիները երկրամասն ամբողջովին առել էին շրջափակման մեջ: Նրանք, ոգևորված անպատժելիությունից, զանգվածային հարձակումներ էին գործում նաև Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի վրա:

Բաքվում հայերի նկատմամբ իրագործվող ցեղասպանությունը ստիպեց անկախության համար ոտքի ելած հայությանը հնչեցնել իր ձայնը և գործողության մեջ դնել իր ուժն ու ցասումը:

Առաջին բախումը տեղի ունեցավ 1990 թ. հունվարի 14-ի երեկոյան Արարատի շրջանի Քյարքի գյուղի տարածքում: Հունվարի 15-ի գիշերը թշնամու հետ փոխհրաձգության ժամանակ զոհվեց Արարատի շրջանի Ավշար գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Տիգրան Մելիքյանը[5]: Այդ նույն օրը՝ հունվարի 15-ին, երբ ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովի հրամանով Արցախում մտցվեց արտակարգ դրություն, և Ադրբեջանի կողմից լուծարվեց Շահումյանի շրջանը, անկասկած, հայ ժողովրդի վրդովմունքը պետք է արտահայտվեր կոնկրետ գործողություններով: Իսկ երբ հունվարի 17-ին Նախիջևանի սահմանամերձ Երասխավանի շրջակայքում ազերի զինյալները գործողություններ ծավալեցին, և որի հետևանքով եղան զոհեր, Արարատի երկրապահները դիմեցին համապատասխան քայլերի: Թշնամուն հակահարված տալու համար Հայաստանի տարբեր տեղերից հունվարի 18-ին Երասխավան մեկնեցին բազմաթիվ կամավորական ջոկատներ, որոնց գործողությունների համակարգումն իր վրա վերցրեց Արարատի երկրապահ ջոկատի հրամանատար Վազգեն Սարգսյանը: Հայ կամավորական ջոկատները, հունվարի 19-ին անցնելով հակագրոհի, «շնորհիվ ճշգրիտ ծրագրված գործողությունների, ոչնչացնելով թշնամու հետախուզական վաշտը», գրավեցին նրա զինյալ ուժերի հենակետ գինու գործարանը: Ազերի զինյալները, թողնելով բազմաթիվ դիակներ, դիմեցին փախուստի[6]: Այդ մարտերում հերոսաբար զոհվեց Մովսես Գորգիսյանը, որը հետմահու արժանացավ ՀՀ Ազգային հերոսի բարձրագույն կոչման և պարգևատրվեց «Հայրենիք» շքանշանով: Զոհվեցին նաև երևանցի Երվանդ Սաղումյանը, Արարատի շրջանի Արմաշից՝ Գևորգ Զեյնալյանը և նույն շրջանի Գորգավանից՝ Ռուբիկ Բազիկյանը: Հայ կամավորների այդ առաջին խիզախությունը համոզեց, որ հաղթելու գրավականը նախ և առաջ համախմբվածությունն ու միասնությունն են: Երասխավանը հայ ժողովրդին մղեց կազմակերպված ու կշռադատված գործողությունների: Երասխավանը ստիպեց սկսել Հայաստանի զինյալ ջոկատները միավորելու գործը:

Այդ օրերին խորհրդային ուժերի կողմից արգելվում էին ուղղաթիռների թռիչքները դեպի Գետաշեն և Շահումյան: Խիստ դժվարացել էր կամավորական ջոկատների այնտեղ մեկնելը և ընկերներին հերթափոխելը: Հունվարի 28-ին՝ ժամը 16-ին, Ֆիոլետովի փողոցի վրա գտնվող Հայոց ազգային բանակի շտաբի մոտ հայտնվեցին խորհրդային շուրջ 30 դեսանտային զրահամեքենաներ և, առանց որևէ

---

[5] Քյարքին ազատագրվելուց հետո գյուղը վերանվանվեց Տիգրանաշեն՝ ի հիշատակ Տ. Մելիքյանի:

[6] Երկրապահ, 22.01.2002:

նախազգուշացման ու պահանջի, կրակ բացեցին ՀԱԲ-ի մարտիկների վրա, որի հետևանքով զոհվեց Կոռնիձորում և Երասխավանում կռված մարտիկ Էդուարդ Մարկոսյանը[7]:

Մոսկվայից յուրաքանչյուր պահի սպասվող սպառնալիքը և անընդհատ հրահրումները ստիպում էին մի միասնական կենտրոնի ենթակայության տակ համախմբել Հայաստանում կազմավորված ինքնապաշտպանական երկրապահ բոլոր ջոկատները, որոնց ամենուր կամավոր անդամագրվում էին տարաբնույթ զինյալ միավորումներ: Արցախ-Հայաստանի պաշտպանության հարցը դարձել էր հույժ կարևոր խնդիր, որը ստիպում էր մարտունակ բոլոր ուժերի համախմբումը մի կենտրոնի մեջ: Եվ ահա 1990-ի հունվարի վերջին և փետրվարի սկզբին կամավորական ջոկատները բարձրացրին Արցախ-Հայաստանի ինքնապաշտպանության կենտրոն կազմակերպելու հարցը: Սակայն պարզվեց, որ ոչ բոլորն էին ցանկանում հրաժարվել ֆիդայականությունից կամ խմբապետությունից: Ճիշտ է, Երասխավանի մարտերից հետո զգալիորեն բարձրացել էր Արարատի երկրապահ ջոկատի հրամանատար Վազգեն Սարգսյանի հեղինակությունը, և տասնյակ ջոկատներ ու խմբեր ընդունում էին նրան՝ որպես ընդհանուր հրամանատարի, և նրանից էին ստանում մարտական առաջադրանքներ: Վ. Սարգսյանի հետ կապի մեջ էին նաև Հյուսիսային Արցախում, Մարտունու և Հադրութի շրջաններում, Մարտակերտում և մյուս տեղերում գործող ինքնապաշտպանական ջոկատները: Վազգեն Սարգսյանը ձգտում էր Անդրանիկի օրինակով (1917 թ.) ստեղծել երկրապահ զորամիավորում: Այդ գաղափարը նա հղացել էր Ղարաբաղյան շարժման սկզբին, հատկապես սումգայիթյան ոճրագործությունից հետո, երբ պարզ դարձավ, որ խորհրդային ուժերը ո՛չ կպաշտպանեն հայ ժողովրդին և ո՛չ էլ կպատժեն ազերի ոճրագործներին: Եվ այսպես՝ «սումգայիթյան ցեղասպանությունը, հայերի ջարդերն ու տեղահանությունները յուրաքանչյուր հայի ստիպեցին ավելի լրջորեն մտածել ինքնապաշտպանության ազգային կեցվածքի մասին»[8]: Պայքարը չէր դադարում, անընդհատ կրկնվում էին հակառակորդի ավազակային հարձակումները: Վազգեն Սարգսյանի բերած տվյալներով, 1990-ի հունվարից՝ երեք ամսվա ընթացքում, հակառակորդի կողմից կատարվել էր 151 հարձակում, որոնց ընթացքում վիրավորվել էր 99 մարդ, սպանվել 19-ը: Իսկ նույն թվականի աշնանը թշնամու կողմից եղել էր 18 հարձակում, որի հետևանքով զոհվել էր 9 մարդ[9]:

Հայաստանում կամավորական, մարտական ինքնապաշտպանական, երկրապահ ջոկատները, տարերայնորեն ծնված խմբերը շուրջ երկու տարի գործում էին առանց կենտրոնի: 1990 թ. մայիսի 20-ին տեղի ունեցած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո, երբ Վ. Սարգսյանն ընտրվեց ՀԽՍՀ ԳԽ ներքին գործերի և պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, նրա կոչով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ենթակայության տակ անցան բոլոր երկրապահ զորամիավորումները: Այդ վիճակը պահպանվեց մինչև Հայաստանի ազգային

---

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում, 25.01.2002:

[9] **Սարգսյան Վ.,** Ոգու փորձություն, 2000, էջ 191:

բանակի ստեղծումը: Միավորված երկրապահ զորամիավորումները 1990-ի ամռանը կարևոր դեր խաղացին հանրապետության սահմանների պաշտպանության գործում: Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղի պաշտպանության դիրքերում օգոստոսի 20-ին քաջի մահով ընկան «Գարեգին Նժդեհ» ջոկատի հրամանատար Սոս Նալդռանյանը և Հարություն Մուրադյանը՝ մարտերում հայտնի «Միայնակ գայլը»: Օգոստոսի վերջին Երևանում դավադիր կրակոցների զոհ դարձան Աշտարակի ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար Գեղազնիկ Միքայելյանը (Չաուշ) և ՀՍԽՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վիտյա Այվազյանը: Երկուսն էլ հետմահու արժանացել են ՀՀ Ազգային հերոսի բարձրագույն կոչման և պարգևատրվել «Հայրենիք» շքանշանով:

1990 թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագիրն ընդունվելուց հետո, որը ազդարարեց Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը, նոր ճանապարհ բացվեց Հայաստանի ազգային բանակի ստեղծման համար: Գերագույն խորհրդի համապատասխան որոշումից հետո ՆԳ նախարարությանը կից սկսեց ձևավորվել հատուկ գունդը: Հատուկ գունդ մտնելու համար դիմեցին հինգ հազարից ավելի երիտասարդներ[10]: Այն կազմակերպվեց 1990-ի սեպտեմբերի 20-ին: Նրա կազմում ընդգրկվեցին Հայաստանի շրջաններում և Երևանում գործող 26 վաշտեր: Հինգ վաշտեր էլ ձևավորվեցին Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջևանում և Մեղրիում: Այսպիսով, հանրապետության սահմանների պաշտպանությունը կենտրոնանում էր հատուկ գնդի վաշտերի ձեռքում: Խնդիր էր դրված այդ աշխատանքը կազմակերպել պետականորեն: Միևնույն ժամանակ մշակվում էր նաև երկրապահ ջոկատների կարգավիճակը:

ՀՀ կառավարության որոշմամբ 1991 թ. Նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե, որը կարևոր աշխատանք կատարեց պաշտպանության բանակ ստեղծելու համար: Նմանատիպ կառույց արդեն գործում էր Լեռնային Ղարաբաղում: Եվ այս ամենով «զգալիորեն հեշտացվեց բարդագույն պայմաններում Հայաստանի, Արցախի և Շահումյանի պաշտպանական գործողությունների համակարգման խնդիրը»: Դա դարձավ այն հիմքը, որի վրա հետո ստեղծվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը[11]:

ՀՀ Նախագահի՝ 1991 թ. դեկտեմբերի 4-ի հրամանագրով ստեղծվեց պաշտպանության նախարարություն, իսկ 1991 թ. դեկտեմբերի 5-ի հրամանագրով պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: 1992 թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» որոշումը, որով հայտարարվեց Հայոց ազգային բանակի ստեղծման մասին: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ներքին գործերի նախարարության միլիցիայի պարետապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը և հանրապետական զինվորական կոմի-

---

[10] Նույն տեղում, էջ 189-190:

[11] Հայաստանի Հանրապետություն, 29.01.2002:

սարիատը: Մի փոքր ուշ ստեղծվեց պաշտպանության նախարարության կենտրոնական աշխատակազմը:

Հայկական ինքնապաշտպանական և մարտական ջոկատների համար ծանր տարի էր մանավանդ 1991 թվականը, երբ Արցախը և Շահումյան-Գետաշենը լրիվ շրջափակված էին և կտրված Հայաստանից: 1991 թ. ապրիլ-մայիսին խորհրդային ուժերի և ադրբեջանական օմոնականների կողմից իրագործվել է «Կոլցո» խայտառակ գործողությունը: Դեռևս 1988-ի նոյեմբերի 23-ին Գետաշենի գյուղական խորհրդի գործկոմի նախագահ Հ. Գյուրջիյանի կողմից ՀԿԿ Կենտկոմ, Գերագույն խորհուրդ և Նախարարների խորհուրդ ուղարկված նամակում զգուշացվում էր, որ ամեն պահի սպասվում է ազերիների հարձակումը Գետաշենի վրա: Եվ «չնայած հաստատակամ ենք, սակայն պաշտպանական միջոցների պակասության պատճառով չենք կարող արդյունավետ ո՛չ պաշտպանություն կազմակերպել, ո՛չ էլ օգնություն ցույց տալ շրջակա գյուղերի հայ բնակչությանը»,- ասվում էր նամակում: Հ. Գյուրջիյանը Գետաշեն, Կամո, Ազատ, Մարտունաշեն և Արմավիր գյուղերի բնակիչների անունից Հայաստանի ղեկավարությունից խնդրում էր «միջոցներ ձեռնարկել» և ապահովել նրանց անվտանգությունը[12]:

Հյուսիսային Արցախի առեղծվածային ճակատագիրը շատ էր անհանգստացնում Լեռնային Ղարաբաղի հայությանը: Դատարկվել էին Գետաբեկի, Թոուզի, Շամխորի և Դաշքեսանի հայկական գյուղերը: Հերթը հասել էր Խանլարի շրջանին: Հայերից դատարկվեցին շրջկենտրոնը, Զուռնաբադը, Մուռոտը, ծանր վիճակ ստեղծվեց Գետաշենի և նրա պաշտպանության տակ գտնվող հայկական գյուղերի համար: Ադրբեջանի իշխանությունները պահանջում էին Գետաշենում տեղավորել ադրբեջանցի 200 ընտանիք: Գետաշենցիները մերժում են այդ անօրեն պահանջը: Գյուղը շրջափակվում է բոլոր կողմերից: Գետաշենցիներին օգնության են հասնում Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից եկած կամավորական, ինքնապաշտպանական ջոկատները: Գետաշենցիները գյուղական խորհրդի նստաշրջանում որոշում են դուրս գալ Խանլարի շրջանից և միանալ Շահումյանի շրջանին, նրա միջոցով էլ՝ ԼՂԻՄ-ին: Գետաշենցիների այդ համարձակ քայլը ավելի է կատաղեցնում Ադրբեջանի իշխանություններին:

Շարժման հենց սկզբից գետաշենցիները պայքարի առաջին դիրքերում էին: Կապը Հայաստանի հետ իրագործվում էր ուղղաթիռներով: Գետաշենցիները պատրաստել էին երդման տեքստ, որի տակ ստորագրել էին գյուղի բոլոր հասուն մարդիկ: Այնտեղ ասված է. □Պետք է կամ ապրենք մեր պապերի գերեզմանների կողքին, կամ մեռնենք□: Ազերիների ճնշման տակ դիրքերը զիջեցին Ազատ, Կամո, Այգեստան գյուղերի բնակիչները: Գետաշենի ինքնապաշտպանական ուժերը 2.5 ամիս հերոսաբար պաշտպանեցին Կուշչի-Արմավիրը[13]:

Ադրբեջանի իշխանություններն օր օրի ավելի էին ուժեղացնում ճնշումը Գետաշեն-Շահումյանում և Արցախում: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը 1990 թ. մարտի 9-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագա-

---

[12] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 103-104:

[13] Խորհրդային Հայաստան, 26.01.1990:

հություն ուղարկած դիմումում, պատմելով այնտեղ ստեղծված վիճակի մասին, զգուշացնում էր հայերի և ազերիների միջև պատերազմական գործողությունների մոտալուտ լինելու մասին, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնում էր երկրի կենտրոնական իշխանությունների վրա[14]:

Դա մեկ տարի առաջ էր: Իսկ 1991-ի գարնանը վիճակն ավելի էր բարդացել ոչ միայն Գետաշեն-Շահումյանում, այլև Բերդաձորում և Հադրութի շրջանում: Թե՛ Բերդաձորի և թե՛ մյուս հայկական գյուղերը ռմբակոծվում էին զենքի բոլոր տեսակներով: Բերդաձորի ինքնապաշտպանական ուժերը իրենց վրա էին վերցրել գյուղերի պաշտպանությունը: Երևանից և Գորիսից ուղղաթիռներով գալիս էին կամավորական ջոկատներ՝ իրենց հետ բերելով զենք, զինամթերք, սննդամթերք և այլ պաշտպանական միջոցներ: Թուրք օմոնականների հետ գյուղեր ներխուժած խորհրդային զինվորականները անխնա ծեծում էին բնակչությանը, խլում նրանց ունեցվածքը կամ էլ տանում բանտեր: Խորհրդային այս «սևհարյուրականները» ազերիների հետ պլանավորում էին զանգվածային սարսափ ու մահ սփռել Գետաշեն-Շահումյանում և ողջ Արցախում: Ադրբեջանի իշխանությունները, է՛լ ավելի ուժեղացնելով ճնշումը Գետաշեն-Մարտունաշենի վրա, բնակիչներին ստիպում էին հեռանալ հայրենի օջախներից: Գետաշենի գյուղխորհրդի նախագահ Հ. Գյուրջիյանի և խորհտնտեսության տնօրեն Շ. Մարությանի՝ դեռևս 1990 թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ Գերագույն խորհրդին ուղարկած նամակում տեղյակ էր պահվել, որ Խանլարի շրջանի ղեկավարությունը պահանջում է երեք օրվա ընթացքում ազատել Գետաշենն ու Մարտունաշենը: Հրաժարվելու դեպքում գետաշենցիներին սպառնում էին դուրս քշել ջարդերով և կոտորածներով: Եվ չնայած այդ մասին գետաշենցիները տեղյակ էին պահել նաև Մ. Գորբաչովին, սակայն վիճակը չէր փոխվել[15]:

Ադրբեջանի իշխանությունները և Ժողովրդական ճակատը աշխարհով մեկ աղաղակում էին, թե հայ-ադրբեջանական սահմանամերձ շրջաններում և հանրապետության տարածքում գտնվող հայկական բնակավայրերում իբր կենտրոնացվել են Լիբանանում վարժեցված իսրայելյան ավտոմատներով զինված 40 հազար հայ կամավորներ: Այդ կարծիքը շրջանառության մեջ էր դրել ԽՍՀՄ պաշտպանության նախարար Գ. Յազովը դեռևս 1990 թ. գարնան սկզբին արած իր հայտարարության մեջ[16]:

1990-1991 թթ. Լեռնային Ղարաբաղում աշխատած փոխգնդապետ, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության քննչական խմբի շտաբի պետ Վիկտոր Կրիվոպուսկովը վերջերս հրատարակած իր օրագրային գրքում նշում է, որ դեռևս 1990 թ. նոյեմբերին իրենց քննչական խմբին հայտնի էր դարձել «Կոլցո» գաղտնի գործողության պլանը: Ադրբեջանի ներքին գործերի նախարարության կազմած այդ պլանի համաձայն՝ պետք է տեղահանվեր Շահումյանի շրջանի հայությունը: «Կոլցո» գործողությունն իրագործելու համար օգտագործել են ԽՍՀՄ զինված

---

[14] Նույն տեղում, 12.03.1990:

[15] Հայաստանի Հանրապետություն, 15.05.1991:

[16] **Бабанов И., Воеводский К.,** *Карабахский кризис, СПб., 1992, с. 41-42.*

ուժերի չորրորդ բանակի 23-րդ դիվիզիայի զորամասերը[17]: «Կոլցո» գործողությունը պաշտպանել է նաև ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ, գեներալ-գնդապետ Բ. Գրոմովը, որը Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար և ԼՂԻՄ կազմկոմիտեի նախագահ Վ. Պոլյանիչկոյի մտերիմն էր Աֆղանստանից:

1991 թ. ապրիլի 29-ի գիշերը սկսվեց Գետաշենի և Մարտունաշենի աննախադեպ հրթիռակոծումը: ԽՍՀՄ ՆԳ նախարարության ներքին զորքերը և Ադրբեջանի ՆԳ նախարարության օմոնականները ապրիլի 30-ին համատեղ լայնածավալ գործողություններ ծավալեցին՝ իբր Գետաշեն-Մարտունաշենում գտնվող անօրեն զինված միավորումները զինաթափելու համար: Բարբարոսների այդ գործողությունները «Կոլցո» ընդհանուր անունով ծածկագիրն էր, որի հիմնական նպատակը, ինչպես ասվեց, Գետաշեն-Մարտունաշենի հայ բնակչության բռնագաղթեցումն էր[18]: Նրանց ո՞վ պետք է պաշտպաներ, եթե ոչ հայ կամավորական, ինքնապաշտպանական ջոկատները: Նույնիսկ Անդրկովկասի օդային պաշտպանության հրամանատար Ա. Արխարովի հրամանով արգելվել էին ուղղաթիռների թռիչքները Գետաշեն, Շահումյան և Լեռնային Ղարաբաղ: Անգամ չի թույլատրվել բժիշկներ ուղարկել Գետաշեն: Սա բացահայտ վանդալիզմ էր, որը կատարվում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովի անմիջական իմացությամբ: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը, նամակով դիմելով Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին և Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Պողոսյանին, կոչ էր անում փրկել «Արցախի մեր հայրենակիցների կյանքը»[19]: Այդ օրերին Լ. Տեր-Պետրոսյանը Մ. Գորբաչովից պահանջում էր թույլ տալ ուղղաթիռների անարգել թռիչքներ դեպի Արցախ-Շահումյան և կանխել Գետաշեն-Մարտունաշեն գյուղերի բնակչության տեղահանությունը[20]: 100-120 զրահամեքենա շրջապատել և չդադարող կրակի տակ էին պահում գյուղերը, որոնց բնակիչներն ու ինքնապաշտպանական ջոկատները հերոսաբար դիմադրում էին: Նրանց շարքում էր նաև քաջարի ազատամարտիկ Թաթուլ Կրպեյանը: Թալինի շրջանի Արեգ գյուղից ելած այդ հայորդին, գնալով Գետաշեն, կարճ ժամանակաշրջանում դարձել էր գյուղի ոգին: Երբ սկսվեց չարաբաստիկ «Կոլցո» գործողությունը, Թաթուլը գիշեր ու ցերեկ դիրքերում էր: Գյուղ ներխուժած ազերի օմոնականները դաժան հաշվեհարդար էին տեսնում բնակչության հետ: Ինքնապաշտպանության ուժերին հաջողվում է գերեվարել 14 զինվորականի: Մայիսի մեկի գիշերը գյուղի դպրոցի ներքնահարկում տեղի ունեցած ճեպախորհրդակցության ժամանակ ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար Բ. Բոյախչյանը հաղորդում է, որ զենք կարող է վերցրնել 200 հոգուց ավելին, սակայն ընդամենը կար մեկ գնդացիր, 4-5 ավտոմատ, 150 որսորդական հրացան և ինքնաշեն մի քանի տասնյակ նռնակներ: Չնայած դրան, Գետաշենը դիմադրում էր հերոսաբար: Թ. Կրպեյանը, նռնակը ափի մեջ, ձգանը հանած, ստիպում է

---

[17] **Кривопусков В.,** *Мятежный Карабах, Ростов-на-Дону, 2003, с. 161-162.*

[18] **Սողոմոնյան Ն.,** 1991. «Կոլցո», Ստեփանակերտ, 1994, 1-ին մաս, էջ 9:

[19] *Голос Армении, 26.04.1991.*

[20] Հայաստանի Հանրապետություն, 2.05.1991:

գնդապետ Մաշկովին իր անձնակազմի անդամներով բանակցությունների մեջ մտնել պաշտպանների հետ[21]: Հենց նրանից խլվեց □Կոլցո□ պատժիչ գործողության ծրագիրը, որի իրագործման պատասխանատուներն էին գնդապետներ Մաշկովն ու Միշինը: Այդ ծածկագրի համաձայն՝ Գետաշեն մտավ անդրկովկասյան ռազմական օկրուգի չորրորդ բանակի 23-րդ դիվիզիան՝ իր հետևից բերելով ադրբեջանական օմոնականների ավազակախմբերը: Գյուղի հիվանդանոցի դիարանում 20 սպանված կար: Ծանր վիրավորներին տեղափոխելու համար ռադիոկապով ուղղաթիռներ էին խնդրում: Զոհվում է Թաթուլ Կրպեյանը, որը հետմահու արժանացել է ՀՀ «Ազգային հերոս» բարձրագույն կոչման և պարգևատրվել «Հայրենիք» շքանշանով: Զոհվում են նաև ազատամարտիկներ Արթուր Կարապետյանը, Մուշեղ Մխոյանը, Վալերի Նազարեթյանը, Մարտունաշենի պաշտպանության ղեկավար Սիմոն Աչիկգյոզյանը, Զարզանդ Դանիելյանը և ուրիշներ: Գյուղի հիվանդանոցի բժիշկները տարվում են Կիրովաբադի բանտ և 17 օր ենթարկվում կտտանքների: Մայիսի լույս 6-ի գիշերը ինքնապաշտպանական ուժերի ճեպախորհրդակցությունում որոշվում է զենքը և փամփուշտը ամբողջովին դուրս բերել Գետաշենի տարածքից՝ 300-350 հոգի պիտի հեռանային խմբերով, երեք հերթով, գիշերը: Պետք է գնային դեպի Քյափազ սարը, այնտեղից էլ թեքվեին Շահումյանի կողմը: Մայիսի 7-ին 3 հազար կին, երեխա, ծեր ռազմական ուղղաթիռներով տեղափոխվում են Ստեփանակերտ, որտեղից էլ՝ Հայաստան: 700 տղամարդկանց ավտոբուսներով տանում են Իջևան, իսկ գրեթե բոլոր կռվողները տեղափոխվում են Շահումյանի շրջան՝ այն պաշտպանելու համար: Գետաշենում իրագործված «Կոլցո» գործողության նախնական փուլում զոհվել է 41 մարդ, վիրավորվել են 70 անզեն գյուղացիներ, կանայք ու երեխաներ: Անհայտ ուղղությամբ պատանդ է տարվել 335 մարդ, որոնցից ազատ են արձակվել 189-ը: Զոհվածներից 18-ը ազատամարտիկներ էին[22]: Պետք է արժանվույն գնահատել Գետաշեն-Մարտունաշենում հայ ինքնապաշտպանական ուժերի սխրագործությունը, որի շնորհիվ փրկվեցին հազարավոր մարդիկ:

Գետաշեն-Մարտունաշենին հաջորդեցին Բերդաձորը, Հադրութը, ապա Շահումյանը: Հադրութի 14 գյուղեր թշնամուն հանձնվեցին գրեթե առանց դիմադրության: Կամավորական ջոկատներն իրենց վրա էին վերցընում պատասխանատվությունը և փորձում հակառակորդի դեմ պայքարին տալ համընդհանուր բնույթ: Իսկ դրա համար նախ և առաջ պետք էր զինվել: Ռազմիկ Պետրոսյանի վկայությամբ, Արցախի ինքնապաշտպանության շտաբը մշակել էր մոբիլիզացիոն ընդհանուր պլան, ըստ որի, բոլոր ջոկատները գիտեին, թե տագնապի դեպքում ով ինչ պիտի անի: Շտաբը մշտապես կապի մեջ էր Երևանի, Աբովյանի, Գորիսի, Սիսիանի, Կիրովականի և այլ կենտրոնների հետ: Այն պատրաստ էր որևէ պահի դուրս բերել առնվազն 10 հազար հոգի: Սակայն նրանց մեծամասնությունը անզեն էր: Դա ամենացավոտ կողմն էր: Զենք ձեռք էին բերում տարբեր ճանապարհներով: Ռուսաստանից կարաբիններ էին բերվում սոլյարայուղով լցված ավտոցիստեռնի

---

[21] **Հարությունյան Ս.**, Ղարաբաղյան պատերազմ, Ե., 2001, էջ 16:

[22] Հնչակ Հայաստանի, Ա տարի, N 13-14, մայիս, 1991:

մեջ: Նման ճանապարհով ձեռք էին բերում նաև հրացաններ, ավտոմատներ, նռնականետներ, ականներ, փամփուշտներ և այլ զինատեսակներ: Հայաստանից գնացքով զենք էր տեղափոխվում հանքային ջրերի անվան տակ: Արցախի պաշտպանության շտաբի ուշադրության կենտրոնում էր Բերդաձորի պաշտպանությունը[23]:

1991 թ. գարնանը, երբ իրավիճակը ավելի էր սրվել, խիստ անհրաժեշտություն զգացվեց բոլոր ինքնապաշտպանական ուժերը միավորել և ստեղծել մարտական ստորաբաժանումներ: Նույն թվականի հուլիսի վերջին Ստեփանակերտում անցկացվեց ինքնապաշտպանական ուժերի ղեկավարների խորհրդակցություն: Հենց այդտեղ էլ որոշվեց ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի ժամանակավոր «Օ» («Օբորոնի») գոյություն ունեցած խմբի հիման վրա, որը ղեկավարում էր Մուրադ Պետրոսյանը, ստեղծել ինքնապաշտպանության ուժերի շտաբ, որի մեջ մտան Ս. Սարգսյանը, Ռ. Քոչարյանը, Գ. Պետրոսյանը, Մ. Պետրոսյանը, Վ. Բալայանը և ուրիշներ: Շտաբը հաշվառում էր ԼՂԻՄ տարածքում գտնվող բոլոր կամավորական և մարտական ջոկատները, զբաղվում նրանց զինման և մարտական բարձր մակարդակի վրա դնելու հարցերով: Խմբերի խոշորացումը կապված էր ունեցած զենքի քանակի հետ, դրանց գործունեության հիմքում դրված էր խստագույն կարգապահություն: Մարզի բոլոր հասուն տղամարդիկ, ինչպես և բավական թվով պատանիներ ու կանայք մտնում էին ինքնապաշտպանական ջոկատների մեջ: Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորող արցախցի շատ ուսանողներ ընդհատում են ուսումը, վերադառնում հայրենի երկրամաս, մտնում ինքնապաշտպանական ջոկատներ: 1991 թ. օգոստոսին Հաթերքում տեղի ունեցած իրադարձությունների օրերին, երբ ինքնապաշտպանական ուժերը գերեցին խորհրդային մի զորամաս և ստիպեցին կատարել գերիների փոխանակում, Սերժ Սարգսյանը դուրս եկավ ընդհատակից՝ որպես ԼՂԻՄ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, ներկայացավ գնդապետ Ժուկովին և գեներալ-մայոր Վ. Ստարիկովին[24]:

Տեղերից առաջարկություններ էին ստացվում ստեղծել պաշտպանության բանակ: Սակայն դրա համար դեռևս չկային իրական պայմաններ: Տարածքում դեռ կանգնած էր խորհրդային բանակը, չկային ֆինանսական միջոցներ և նյութատեխնիկական բազա: Էլ չենք խոսում ռազմական մասնագետների բացակայության և այլ հարցերի մասին: Մնում էր շարունակել ուշադրություն դարձնել ինքնապաշտպանական ուժերի ամրապնդման և մարտունակության բարձրացման վրա: Ասենք նաև, որ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) կազմավորումից անմիջապես հետո ինքնապաշտպանության ուժերի մարտունակության բարձրացման հարցը գտնվում էր հանրապետության ղեկավարության ուշադրության կենտրոնում: Իսկ երբ 1991-ի սեպտեմբերին խորհրդային ուժերը հետ քաշվեցին, և դեմ առ դեմ մնացին հայերն ու ազերիները, հրամայական դարձավ վերանայել ինքնապաշտպանական ուժերի կառուցվածքը: Նախ և առաջ ուժեղացվեցին Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ուժերը, որոնք, 1991-ի սեպտեմբերի 14-ին, անցնելով հակահարձակման, ազատագրեցին Բուզլուխը: Այդ

---

[23] **Պետրոսյան Ռ.**, Արցախ, պատերազմ, զինադադար, Ե., 2001, էջ 72-81:

[24] **Арутюнян В. Б.,** *События в Нагорном Карабахе, Е., 1994, ч. 4, с. 41.*

մարտում հայ պաշտպանները տվեցին երեք զոհ, իսկ հակառա-կորդը՝ 15, երեք գերի, ներառյալ՝ մեկ սպա: Ապա ազատամարտիկներն ազա-տագրեցին Էրքեջը: Այդ մարտերում հերոսաբար էին մարտնչում «Արաբո», «Ալաշկերտ», «Մեծն Տիգ-րան» և այլ ջոկատներ: Հերոսաբար էին կռվում նաև Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջաններում մարտնչող ինքնապաշտպանական ջոկատները: Հադրու-թի շրջանի Տող գյուղում իրադրությունն այնչափ սրվեց, որ ծայր առան ռազմական գործողությունները: Այստեղ ստեղծվել էր կուսակցության նոր շրջկոմ, որի առաջին քարտուղար էր հաստատվել գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն, «Գորշ գայլեր» ռոմակի անդամ Ն. Ջահանգիրովը: Տեղական թուրք-ադրբեջանական ուժե-րը համալրվեցին Բաքվից ուղարկված 125 զինված օմոնականներով, որոնք բացա-հայտ զբաղվում էին ահաբեկչությամբ: Ազերիների այդ ոտնձգությունների դեմ պայքարելու համար կազմակերպվեց Տողի ինքնապաշտպանական ջոկատը: Տողն ազերիներից ազատագրելու և թշնամուն պատժելու համար ԼՂՀ կենտրոնական շտաբից այնտեղ ուղարկվեց գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը: Այդ նույն թվականի օգոստոսի 4-ին Վազգեն Սարգսյանը Արցախի խմբապետներին ուղարկած նամակում խորհուրդ էր տալիս «լսել Արկադիին»[25]: Ա. Տեր-Թադևոսյանի հմուտ և տաղանդավոր ղեկավարությամբ հայ ինքնապաշտպանական ուժերը հոկտեմբերի 29-ի երեկոյան, առանց զոհերի, գյուղն ազատագրեցին թուրք-օմոնականներից[26]: Դա Արցախի տարածքում ազերիներից ազատագրված առաջին բնակավայրն էր:

Արցախի ինքնապաշտպանական ջոկատների թիվը օրեցօր ավելանում էր: Հայաստանից, Արցախից և այլ տեղերից հարյուրավոր կամավորներ էին մտնում ինքնապաշտպանական ջոկատներ: Գեներալ Արթուր Աղաբեկյանը պատմում է, որ 1991-ի նոյեմբերին ԼՂՀ բոլոր շրջանների ինքնապաշտպանության հրամանա-տարները շտապ կանչվել էին Ստեփանակերտ: Այդ խորհրդակցությանը մասնակ-ցում էին Վազգեն Սարգսյանը և գեներալ Գուրգեն Դալիբալթայանը: Հենց այդտեղ էլ որոշում են Արցախ-Հայաստանում ստեղծել պաշտպանական բանակ և պաշտ-պանության պետական կոմիտե: ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահ է նշանակվում Սերժ Սարգսյանը, տեղակալ՝ Արկադի Կարապետյանը, իսկ շտաբի պետ՝ Արկադի Տեր-Թադևոսյանը: Քանի որ արդեն կային մարտական ստորաբաժանումներ, դրանք թողնվեցին մեկ ընդհանուր հրամանատարության տակ[27]:

Հակառակորդի կողմից չէր դադարում Ստեփանակերտի և մյուս բնակավայ-րերի ռմբակոծումը: Ինքնապաշտպանական ուժերի գործողությունները հետզհետե ավելի վճռական էին դառնում: Նրանք նոյեմբերի 15-ին ազատագրեցին Հադրութի շրջանի Ծամձոր և Սարիշեն գյուղերը, իսկ նոյեմբերի 16-ին՝ Էդիլլուն: Զարգաց-նելով հարձակումը՝ նոյեմբերի 17-ին ազատագրեցին Սալաքյաթին, իսկ նոյեմբերի 20-ին՝ Քարագլուխը: Նույն թվականի դեկտեմբերի 16-ին Մարտունու շրջանում

---

[25] Վ. Սարգսյանի նամակի բնագիրը գտնվում է Ա. Տեր-Թադևոսյանի մոտ:

[26] Նշված իրադարձությունների մասին տե՛ս Մկրտչյան Շ., Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Ե., 1996, էջ 49-53, ինչպես նաև Ա. Տեր-Թադևոսյանի անտիպ հուշերը:

[27] Հայոց աշխարհ, 13.07.2002:

ծավալվեցին իսկական պատերազմական գործողություններ: Մարտերը թեժացել էին մանավանդ Ճարտարի ինքնապաշտպանական ուժերի և Վերին Վեյսալու գյուղում ծվարած օմոնականների միջև[28]:

1992 թ. սկզբին Արցախում կային ինքնապաշտպանության 10-ից ավելի վաշտեր ու դասակներ, որոնց մեջ ընդգրկված էին մոտ 1000 կամավորներ[29]: 1991-ի վերջին ԼՂՀ սահմանամերձ շրջաններ էին բերվել ազերիների 18 գումարտակ՝ 300-ական զինվորներով, որոնք ունեին 63 զրահամեքենա, 2 տանկ, ավելի քան 27 հրանոթ: Այդ գումարտակներից 8-ը պետք է գործեին գլխավոր հարվածի՝ Ստեփանակերտի, իսկ 4-ը՝ երկրորդ հարվածի՝ Հադրութի շրջանի ուղղությամբ[30]:

Ընդհանրապես, 1991 թ. քիչ չէր հայերի զոհերի և կրած վնասների թիվը, չնայած ինքնապաշտպանական ուժերը բոլոր հնարավորություններն օգտագործում էին այն նվազեցնելու համար: Այսպես, 1992-ի սկզբի տվյալներով մինչ այդ Արցախում զոհվել էր 501 մարդ, այդ թվում՝ 270 հայ, 216 ադրբեջանցի և 15 զինծառայող: Վիրավորվել էին 400 հայ, 180 ադրբեջանցի և 34 զինծառայող: 1991-ին պատանդ էր տարվել 599 հայ: 1991-ին Լեռնային Ղարաբաղում բոլոր զոհվածների թիվը գրեթե 10 անգամ գերազանցել է 1990-ի զոհերի թվին[31]: 1992-ի գարնանը արցախցիների գերխնդիրը երկրամասի պաշտպանության հարցն էր և հանրապետության պաշտպանության ուժերի կազմակերպումը: Դեռևս փետրվարի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում էր ընդունել ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատար նշանակել գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանին: Այդ նույն որոշմամբ հաստատվել է նաև ԼՂՀ պաշտպանության խորհրդի կազմը՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյան (նախագահ), Օլեգ Եսայան, Վիտալի Բալասանյան, Սերժ Սարգսյան, Արկադի Տեր-Թադևոսյան, Ռոբերտ Քոչարյան և Արկադի Կարապետյան: Ելնելով «ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» օրենքի 24-րդ հոդվածից՝ 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց պաշտպանության կոմիտե, որի նախագահ նշանակվեց Սերժ Սարգսյանը: ԼՂՀ պաշտպանության կոմիտեն առանց հապաղելու ձեռնարկեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նյութատեխնիկական բազայի ստեղծման և կազմակերպչական այլ խնդիրների լուծման աշխատանքներ: Ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման այդ շրջանում, ինչպես նաև հետագայում Արցախի բանակի ձևավորման գործում կարևոր դեր է խաղացել Սամվել Բաբայանը, որը հետո հանդիսացել է Արցախի բանակի գլխավոր հրամանատարը:

Պաշտպանության կոմիտեի գլխավոր խնդիրը դարձավ Շուշիի ազատագրումը և Ստեփանակերտի արևելյան ու հյուսիսային կողմերում գտնվող ադրբեջանական բնակավայրերում տեղակայված կրակակետերի վերացումը: Շուշիի ազատագրումը և Լեռնային Ղարաբաղը մայր Հայաստանի հետ ցամաքայի միջանցքով միացնելը պատմական անհրաժեշտու-

---

[28] Երկիր, 18.12.1991:

[29] **Հարությունյան Ս.**, Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998, էջ 6:

[30] **Հարությունյան Մ. Ա.,** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Ե., 2002, էջ 52:

[31] Երկիր, 18.01.1992:

թյուն էր, որի հետաձգումը և դանդաղումը կլինեին մեծագույն սխալ: Ազերիները Շուշին վերածել էին մի որջի, որտեղից անընդհատ մահ էր սփռվում հայկական բնակավայրերի, հատկապես Ստեփանակերտի վրա: Բավական է նշել, որ 1991-ի նոյեմբերից մինչև 1992-ի մայիսի սկիզբը ադրբեջանական կրակակետերից Ստեփանակերտի վրա արձակվել է 4741 արկ, որից մոտ 3 հազարը՝ «Գրադ» կայանքից: Այդ հրետակոծությունների հետևանքով զոհվել է 111 և վիրավորվել 332 մարդ, մեծ մասը՝ կանայք, երեխաներ և ծերեր: Ավերվել են 370 բնակելի տուն և շինություն[32]:

Ադրբեջանի «բնաջնջողական պատերազմի» այդ քաղաքականության հետևանքով ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում ստեղծվել էր օրհասական կացություն: Ստեփանակերտը կանգնած էր սովի եզրին: Բնակիչները միջին հաշվով օրական ստանում էին 11 գրամ ալյուր և 2.5 գրամ շաքարավազ: Չկար հեղուկ վառելիք, անջատվել էր էլեկտրաէներգիան: Հազարավոր ընտանիքներ մնացել էին անօթևան: Այսպիսի իրավիճակում Շուշիի և ադրբեջանական մյուս կրակակետերի ոչնչացումը ու Հայաստանի հետ ցամաքային կապի բացումը դարձան կենաց ու մահվան հարց: Ահա թե ինչու ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը Պաշտպանության խորհրդից պահանջեց լռեցնել թշնամու կրակակետերը և ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունը: 1992-ի մայիսի 8-9-ը ԻՊՈՒ-ի զորամասերը, որոնցում հաշվվում էին մոտ 1500 ազատամարտիկներ, ջախջախեցին հակառակորդին, ոչնչացրին կրակակետերը, ազատագրեցին Շուշին և մի քանի օրվա ընթացքում բացեցին Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհը: Եվ այսպես՝ Արցախն ընդմիշտ կապվեց մայր Հայաստանի հետ: 1992-ի մայիսի 9-ը համարվեց ԼՂՀ պաշտպանական բանակի ստեղծման օր: Նույն թվականի հունիսի վերջի տվյալներով Արցախում կռվում էին շուրջ յոթ հազար ազատամարտիկներ[33]: Արցախի բանակի ամբողջական կազմավորման գործընթացը ավարտին հասավ այդ նույն թվականի սեպտեմբերին:

ОТ ДОБРОВОЛЬЧЕСКИХ ОТРЯДОВ ДО СОЗДАНИЯ АРМИИ ОБОРОНЫ

АБРАМЯН Г. Б.

Резюме

Национально-освободительная борьба Карабаха диктовала создание добровольческих отрядов самообороны. Были сформированы отряды “Еркрапа”. Вначале эти отряды создавались стихийно, с целью защиты границ республики и армянского населения Карабаха. Власти Республики Армении приступили к созданию организованной и регулярной армии, призванной защищать Родину. Были предприняты шаги в целях объединения отдельных отрядов самообороны в единую армию, которая была сформи-рована 28 января 1992 г.

[32] Ազգ, 9.05.1992:

[33] Հայաստանի Հանրապետություն, 30.06.1992: